Ծուշանիկ Կուրղինյան

Գիշեր 3

Ահա լուսինը
Ամպի ուսին մենակ տրտում քուն մտավ,
Մի սիրունիկ,
Հուրծիր աստղիկ վազեց՝ հարմար տեղ գտավ:

Արտը հասած
Հեքիաթ ասաց . ուռին լացեց երազում .
Գետն էլ այդպես
Նոր հարսի պես քչքչում է ու նազում:
Դե դուրս արի,
Ես այս սարի ոգին եմ քաջ-խենթ-խելառ
Ու պերճ խոսքի
Ունեմ ոսկի քնար մի նուրբ, ոսկելար:

Եկ ու անցիր
Որպես անծիր երկնքի վառ լուսատու,
Որ հլու հեզ
Ներբողեմ քեզ երգովս խիզախ ու հատու:

Վաղը նորից
Չարքաշ օրից հոգիս կընկնի լծի տակ,
Գուցե եկար
Ու չգտար ինձ հմայքիդ հպատակ:

Դեհ դուրս արի,
Ես այս սար ոգին եմ ինքնակալ,
Գահս է միշտ
Տառապանք, վիշտ . . . փառքս՝ տանջվել ու տոկալ:

1912 թ.